



**ԶԲՈՍԱՇՆՐՁԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N /ՄՓ17**

ք. Ստեփանակերտ

թ. \_\_\_\_\_

\_\_\_\_\_, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Վարանդա Թրավլ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Արուսյակ Աղամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է սոց փաթեթի շրջանակներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ տրամադրելով համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում (այսուհետ՝ Հավելված) նշված ծառայությունները:

1.3. Ծառայություններն իրենց մեջ պարտադիր կարգով ներառում են գիշերակաց որևէ հյուրանոցային տնտեսության օբյեկտում (հյուրանոց, առողջարան, հանգստյան տուն, հյուրատուն), այսուհետ՝ հյուրանոց, իսկ առանց գիշերակացի փաթեթի դեպքում՝ փաթեթի երթուղին:

1.4. Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է Հավելվածում:

1.5. Ծառայությունները համարվում են մատուցված հավելվածում նշված ծառայությունների ժամկետի ավարտի պահից:

1.6. Կատարողը՝ որպես զբոսաշրջային գործակալ, հիմք ընդունելով իր և հյուրանոցի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված գործակալության համապատասխան պայմանագրերը, պարտավորվում է Պատվիրատուին մատուցել զբոսաշրջային ծառայություններ, մասնավորապես Պատվիրատուի համար ամրագրել և վերջինիս տեղավորել Հավելվածում նշված հյուրանոցային վայրում նշված պայմաններով:

1.7. Սոցիալական փաթեթի առկայության դեպքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար գումարի փոխանցումն իրականացվում է ՀՀ Կառավարության 27.12.2012 թվականի N1691-Ն որոշման թիվ 1 հավելվածի 20-րդ կետին համապատասխան:

**2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

**2.1 Կատարողը պարտավոր է՝**

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետում՝ համաձայն իր կողմից սահմանված ընթացակարգի.

2.1.2 Կատարողը Պատվիրատուի պատվերն ընդունում և հաստատում է սույն ժամանակահատվածում հյուրանոցում առկա հնարավորությունների սահմաններում:

**2.2 Կատարողը իրավունք ունի՝**

2.2.1 Միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից Պատվիրատուի կողմից (նախապես պայմանավորված) վճարումները ժամանակին չկատարելու դեպքում՝ վերջինից պահանջելով կրած վնասների հատուցում.

2.2.2 Փոփոխել ծառայությունների արժեքը՝ կախված հյուրանոցի կողմից ներկայացված սակագների փոփոխություններից, այդ մասին անհապաղ տեղյակ պահելով Պատվիրատուին:

**2.3 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.3.1 Ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում՝ պահպանել Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,

2.3.2 չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և կատարել ժամանման երկրի տարածքում գործող օրենքների պահանջները:

**2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝**

- 2.4.1. Ժամանակավոր կացության և տարանցիկ վայրերում ստանալ Պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
- 2.4.2. ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանություն,
- 2.4.3. ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ Կատարողի կողմից Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,
- 2.4.4. Պատվիրատուն իրավունք ունի մեկնումից 20 (քսան) օր առաջ հրաժարվել պատվերից առանց տուգանքների:

### **3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը**

- 3.4. Պայմանագրի գինը, մատուցման ենթակա ծառայությունները, դրանց իրականացման ժամկետները, հաշվարկները նշվում են Հավելվածում:
- 3.5. Կատարողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը Պատվիրատուն ներկայացնում է բանկ, որից հետո ծառայությունների մատուցման պայմանագրի գնի ամբողջական փոխանցումը ( կամ պարբերական փոխանցումը) հաստատող բանկի կողմից վավերացված վճարման հանձնարարագիրը տրամադրում է Կատարողին կամ ուղարկում [varandatravel@inbox.ru](mailto:varandatravel@inbox.ru) էլեկտրոնային հասցեին:
- 3.6. Պատվիրատուն կարող է Կատարողի համաձայնությամբ ստանալ ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ սույն պայմանագրի 3.5. կետով նախատեսված վճարման հանձնարարագիրը ծառայությունների մատուցման պայմանագրի ավարտից հետո առնվազն 10 օրվա ընթացքում ներկայացնելու պայմանով:
- 3.7. Պայմանագրի վաղաժամկետ դադարման կամ մասնակի կատարման դեպքերում (գրավոր դիմումի կամ համաձայնագրի հիման վրա) Պատվիրատուին վերադարձման ենթակա գումարը, որը փոխանցվել է Կատարողին պետական բյուջեից տրամադրված միջոցներից, Կատարողը վերադարձնում է Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվին:

### **4. Կողմերի պատասխանատվությունը**

- 4.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ Պատվիրատուի կողմից Հավելվածով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ նրա նկատմամբ կիրառվող տուգանքի չափ է սահմանվում՝
- ա)** Պայմանագրի գնի 25% (քսանհինգ տոկոսի) չափով, եթե Պատվիրատուն Պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ.
- բ)** Պայմանագրի գնի 50% (հիսուն տոկոսի) չափով, եթե Պատվիրատուն Պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի <<ա>> պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել Պայմանագրով նախատեսված ծառայություններից,
- 4.2. Կատարողի՝ օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.3. Կատարողը պատասխանատու է միայն Հավելվածում նշված ծառայությունների կատարման համար:
- 4.4. Կատարողը պատասխանատու չէ համապատասխան Պրինցիպալի կողմից մատուցված ծառայությունների հրապարակային պայմանագրից կամ դրա պայմաններից տարբերվող, Պատվիրատուի համար ոչ բարենպաստ պայմաններով ծառայությունների փաստացի մատուցման համար, որոնց մասին Կատարողը նախապես չէր կարող և պարտավոր չէր տեղյակ լինել:
- 4.5. Պատվիրատուի կողմից սեփական կամքով և նախաձեռնությամբ Հավելվածում նշված, Կատարողի կողմից տրամադրված և Պրինցիպալի կողմից մատուցված ծառայություններից չօգտվելու կամ ոչ ամբողջ ծավալով օգտվելու դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից չստացված ծառայությունների մասով համապատասխան գումարի չափով փոխհատուցում տրամադրելու համար:
- 4.6. Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն կրում է իր գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի հատուցման պատասխանատվություն:

### **5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհատթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Հավելվածում նշված վերջնաժամկետի ավարտը:

7.2. Հյուրանոցային, տրանսպորտային, էքսկուրսիոն, ռեստորանային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից, որոնց հետ Կատարողն ունի համապատասխան պայմանագրեր: Համապատասխան պայմանագրով մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ կամ թերի կատարման համար պատասխանատվություն է կրում համապատասխան պայմանագրով ծառայություն մատուցող կողմը:

7.3. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ և ԼՀՂ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Պայմանագրի ստորագրումից հետո պատվերից հրաժարվելը կամ փոփոխություններ կատարելը իրականացվում է միմիայն գրասենյակում:

7.5. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն դեպքում, եթե դրանք կատարված են լրացուցիչ համաձայնագրով, գրավոր և ստորագրված կողմերի կողմից:

7.6. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<u>Պատվիրատու</u>	
ՀՀ քաղաքացի	_____
Հասցե	_____
Անձնագիր՝ _____ N _____	
Տրված՝ _____	_____ = ի կողմից
Սոց. քարտ _____	- _____
Սոց. փաթեթի չ/չ՝ _____	
Բանկ՝ << >> _____	
Աշխատանքի վայրը _____	
Աշխատավայրի հասցե _____	
Հեռ.՝ _____	
_____	
(ստորագրություն)	

<u>Կատարող</u>	
<b>&lt;&lt;Վարանդա Թրավլ&gt;&gt; ՍՊԸ</b>	
ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 6/24	
ՀՎՀՀ 90028039	
<<Արցախբանկ>> ՓԲԸ, Սիգրանակերտ, մ/ճ	
ՀՀ 22301 036689400	
E-mail: <a href="mailto:varandatravel@inbox.ru">varandatravel@inbox.ru</a>	
Հեռ՝ +374 47 955 957, 097 230 730	
Տնօրեն՝ Արուսյակ Աղամյան	
(ստորագրություն)	
Կ.Տ.	

**Տ ե ղ ե կ ա ն ք**

\_\_\_\_\_ ի ն „Վարանդա Թրավլ“, ՍՊԸ-ի միջև „\_\_\_\_\_,“ \_\_\_\_\_ թ. կնքված N /ՍՓ17  
 գրուսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը	
Հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը	
Տնողությունը (գիշերերի քանակը)	
Ամրագրված սենյակի տիպը և կարգը	
Մենյակում հյուրերի թիվը (չափահաս/երեխա)	
Մենյակում հյուրերի անունները	
Ժամանման տարի, ամիս, օր, ժամ	
Մեկնման տարի, ամիս, օր, ժամ	
Մանրի կազմակերպման և մատուցման ծառայության հաճախականությունը, պայմանները	
Բուժական ծառայություններ	
Շրջագայության երթուղին	
Տեսարժան վայրերի այցելության ծրագիրը, երթուղին	
Տրանսպորտային միջոցների տեսակը, դասակարգումը	
Փաթեթի գնի մեջ ներառված այլ ծառայություններ	
Կացության մեկ գիշերվա արժեքը	
Հյուրանոցային ծառայությունների արժեքը	
Սոցիալական փաթեթի շրջանակներում վճարվող գումարը	
Պատվիրատուի կողմից վճարվող գումարը (հավելավճար)	
Ընդհանուր գումարը	
<b>Պայմանագրի գինը /վճարման ենթակա գումարը</b> (ներառյալ բոլոր տեսակի հարկերը)	

**Կողմերի տվյալները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պատվիրատու**

ՀՀ քաղաքացի \_\_\_\_\_  
 Հասցե \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 Անձնագիր՝ \_\_\_\_\_ N \_\_\_\_\_  
 Տրված՝ \_\_\_\_\_ – ի կողմից  
 Սոց. քարտ \_\_\_\_\_ - \_\_\_\_\_  
 Սոց. փաթեթի Հ/Հ՝ \_\_\_\_\_  
 Բանկ՝ << >> \_\_\_\_\_  
 Աշխատանքի վայրը \_\_\_\_\_  
 Աշխատավայրի հասցե \_\_\_\_\_  
 Հեռ.՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (ստորագրություն)

**Կատարող**

**<<Վարանդա Թրավլ>> ՍՊԸ**  
 ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 6/24  
 ՀՎՀՀ 90028039  
 <<Արցախբանկ>> ՓԲԸ „Տիգրանակերտ,, մ/ճ  
 ՀՀ 22301 036689400  
 E-mail: [varandatransel@inbox.ru](mailto:varandatransel@inbox.ru)  
 Հեռ՝ +374 47 955 957, 097 230 730  
 Տնօրեն՝ Արուսյակ Ադամյան

\_\_\_\_\_ (ստորագրություն) Կ.Տ.